Դանիել Վարուժան

Վենետիկ

Ծավի՛ Վենետիկ, փառապա՛նծ Տիկին,
Զոր Իտալիան գինով սընույց,
Եվ Արևելքն իր զարդերով անգին,
Պըճնեց վեհ ճակատդ ու ոտքերըդ լույծ:

Ադրիականին բամբիշն ես հավետ,
Զարդարված՝ ջուրե ժապավեններով,
Լիտոյի արևն, ելլելով ծոցեդ,
Թագ կ'ըլլա գըլխուդ և կ'ընկըղմի ծով:

Կը հեղու երկինքն, իբրև սիրահար,
Աստղե՛ր գըրկիդ մեջ, աստղեր մազերուդ,
Ծովն առջևդ սըփռե՛ր է գորգ ու գոհար.
Զույգ կապույտի մեջ Երա՞զ մ'ես կապույտ:

Կըռթնած՝ բարձերուն վըրա փըրփուրե՝
Որքա՞ն թովիչ ես, երգն ալքերուն լուրթ
Երբ որ կ'ունկընդրես, ո՛վ Քաղաք ջուրե,
Ո՞վ Լափյուրինթոս քայլերու պանդուխտ:

Ունիս ճամբաներ նեղ ու օձհոլով,
Կեսը սալաքար, և կեսը ալիք.
Հոն կըրնանք, ընկերս ու ես, խոսելով

Երթալ, ես՝ ոտքով, նավակի մեջ՝ ինք:

Անիվն անոնց մեջ ակոս տողած չէ.
Եվ ոչ ալ պայտն հուր կայծեր սերմանած.
Ձրկնորսին սանդա՛լն հրզոր կը հընչե
Հո՛ն, ուր ճեմեց Տոժն օր մը սիգընթաց:

Անթիվ կըզգիներ, շենքեր վըրանին,
Կոր կամուրջներով են շրջթայարկված:
Կարծես կուզ ուղտերն են կարավանին՝
Անապատին մեջ ժայռերու փոխված:

Կը լվա ջուրն հի՛մը տուներուն գեջ՝
Փոշի առ փոշի ծեփը լիզելով,
Երկու կըղմինտրի անջրպետին մեջ
Կ'ածե սլականջն ի՛ր ձուերն ալեխառով:

Պատուհաններուն տակ ջրանցներ շափյուղա
Հայլի են կարծես՝ զոր ծովն է հրդեր,
Ուր աստղերուն մեջ, լուսնին քով, կըրնա
Վենետկուհին իր դեմքը զետեղել:

Որմերուն ըստվերն հևհև կը նազի
Ալիքներուն վրա, ալիքն՝ որմերու:
Տունը ջուրին մեջ նորեն կը սկըսի,
Միշտ քայքայելով՝ առանց փըլչելու:

Դըռներուն խոնավ շեմը կոնտոլ մ'է.
Անզույգ Քաղաքին անզո՛ւյգ կարկուրա,
Որ գիշերվան մեջ՝ ճակտին կը կըրե,
Միակ աչք մ'հրեղեն, փայտե՛ կիկլոպա,

Որ լորտուի պես սև, սողագընաց,

Կամուրջներուն տակ կը սահի կ'անցնի,
Ինչպես զրոջումին տակ մե՛ղքն ամոթխած…
Ա՛յս տարբերությամբ՝ որ մեղքն աչք չունի:

Ահա Մեծ-Զրրանցդ, ո՛վ Քաղաք-դրշխոդ,
Որ կոր երիզով քեզ կը պարուրե,
Իբր Ադրիականն իր թևը կապույտ
Վիզրդ անցրներ՝ որ թուշդ համբուրե:

Սուրբ Մարկո՛սն ահա, թանգարան անհուն
Գեղարվեստներու, բրածո սուրբերու.
Անոր կից պալա՛տն ահա Տոժերուն.
Խորանը գահեմ քայլ մրն է հեռու:

Ահա Փիոմպիններն՝ որոնց տակ հավետ
Այսօր կը մրնչեն տատրակնե՛ր հրլու.
Երնե՛կ քեզ անկմանդ մեջ իսկ, ո՛վ Վենետ,
Բանտերդ են փոխված թրոչնո բույներու:

Եվ ա՛յլ տաճարներ, ա՛յլ ապարանքներ,
Կոթողներ կրոնքիդ, հանճարիդ հրսկա.
Ալիքներ անոնց առջև կ'երգեն դեռ
Փառքդ անցյալ՝ գրրված ծովերուն վրա:

Ու Հառաչանքի կամուրջն ավասիկ,
Կամուրջն՝ որուն վրա, իրիկնադեմին,
Երգը լրսեցի ջուրերուն հեզիկ՝
Երբ կու գար աչքերս համբուրել քամին:

Կանգնած՝ արևուն առջև մայրամուտ՝
Սերտեցի գույներ, շողեր մեղմրնթաց.
Քու եկրնքիդ մեջ և քու ջուրերուդ՝
Հոգիս նրկարչի վրրձին մ'էր գրտած,

Ո՜րքան ալիքներ, ալիքներ լաժվա՜րդ,
Ալիքներ նարի՜նջ, հակի՜նթ ալիքներ…
Ո՛վ Վենետիկդ իմ, Լրճակրդ զրվարթ
Թիցիանոյի երանգապնակն էր:

Պիտի քընարս իմ քեզ հիշե հավետ,
Քու փառքրդ մուրճի, փառքրդ վրրձինի.
Պիտի հիշե և՛ խուցն այն տրխրավետ
Կանանչ ջրանցին վրա սուրբ Գարմինիի:

Իր պատուհանին ձողերուն առջև
Էր՝ որ ես լացի, նայելով լուսնին,
Կամքրս բանտարկված: Հոն սիրտս հևիհև
Ըմպեց հեռացող երգը ձրկնորսին:

Դարձյալ անկից է՝ որ ես առջի հեղ
Տեսա Լինտան, կույսն ատամներով բրինձ,
Որ նրստած իր հոր նավակին մեջտեղ՝
Կը հյուսեր ուռկան մ'ու կը ժրպտեր ինձ…